ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԽԹԱԼԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

⋈ ՀՀ Լոռու մարզ, ք.Ախթալա

akhtala.lori.@mta.gov.am

N 79/02-14

,,21,, մարտի 2014թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ներկայացնում եմ Ախթալա համայնքի ավագանու 2014թվականի մարտի 21-ի ,, ՀՀ Լոռու մարզի Ախթալա քաղաքի անվանափոխության մասին,, թիվ 9-Ա որոշումը:

Առդիր 1 թերթ:

ԱԽԹԱԼԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ԽԱՉԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ախթալա համայնք,ք.Ախթալա
հեռ. 098206753

ՈՐՈՇՈՒՄ

21 մարտի 2014թ. N 9 –Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՔԱՂԱՔԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 30-րդ կետով, հիմք ընդունելով 2014թվականի մարտի 20-ին համայնքում կայացած հասարակական քննարկումների արդյունքում արձանագրված տեսակետները՝

Ախթալա համայնքի ավագանին որոշում է.

1. Մերժել Ախթալա քաղաքի անվանափոխության մասին առաջարկությունը:
2. ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների հանձնաժողովին առաջարկել Ախթալա անունը անվանափոխել Ախթալի:

Որոշումն ընդունվել է: կողմ դեմ ձեռնպահ

1. Դալլաքյան Ալբերտ
2. Խաչիկյան Կարեն
3. Մուրադյան Անահիտ
4. Սոսինյան Ալբերտ
5. Փարսադանյան Սամվել
6. Ազարյան Կարեն
7. Վարդանյան Լյովա

ԱԽԹԱԼԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ԽԱՉԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԱԽԹԱԼԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ Լոռու մարզ, ք.Ախթալա

akhtala.lori.@mta.gov.am

N 75/22-14
21 մարտի 2014թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Տեղեկացնում եմ, որ Ախթալա համայնքի ավագանին 2014թվականի մարտի 21-ի ,, Ախթալա քաղաքի անվանափոխության մասին,, թիվ 9-Ա որոշմամբ մերժել է Ախթալա քաղաքի անվանափխման ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների հանձնաժողովի կողմից արված առաջարկը և առաջարկել Ախթալա քաղաքը անվանափոխել Ախթալի անունով:

Կից ներկայացնում եմ մեր կողմից Ախթալա անվանումը չփոխելու մասին հիմնավորումներ:

Խնդրում եմ մեր հիմնավորումները ներկայացնել ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների հանձնաժողովին՝ օրենքով սահմանված համապատասխան ընթացք ստանալու նպատակով:

Առդիր 2 թերթ:

ԱԽԹԱԼԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ԽԱՉԻԿՅԱՆ

Ախթալա անվանափոխության հետ կապված

Այսօր Ախթալա անվանք բնակավայրը հայտնի է եղելԱգարակ,Պղնձահանք, Արծաթահանք անվանումներով:Առաջին անգամ Ախթալա անունը հիշատակվում է Վրաց Ալեքսանդր Առաջինի /թագ.ավորել է 1412-1442 թթ. / կողմից 1438թ. տրված մի հրովարտակում ուր արդեն Պղնձահանքը հիշվում է Ախթալա ձևով. ,,Ախթալայում տաս ծուխ հայեր՝ իրենց կալվածքով ,, : Հայկական ավելի ուշ սկզբնաղբյուրներում Ախթալան հիշվում է որպես Ախտալի: Այսպես Սարգիս արքեպիսկոպոս Ձալալյանը, Ախթալայի ամրոցի և այնտեղ գտնվող վանքի մասին գրում է. ,,Ախտալին ձորամեջի մի մեծանիստ գյուղէ, որը Լալվարից երկու ժամվա ճանապարհով հեռու է, արևելյան կողմից հարում է Ճոճկանին... Տեսնողին հիացնում է հատկապես Աստվածամոր հոյակապ և երկնանման կաթողիկեն,իր չքնաղ քանդակագործությամբ, ճարտարապետությամբ:Եկեղեցին կառուցվել է բարձրավանդակի վրա, իսկ նրա գագաթը շրջապատված է ամրագույն պարիսպներով... ,, /Մեջբերումն ըստ Սարգիս վրդ. Ձալալյանի. Ճանապարորդություն ի մեծն Հայաստանի, հատոր Տփղիս 1842, էջ 85/:

Ախտալի ձևով է նաև հիշատակվում Սանկտ-Պետերբուրգի Գեղարվեստի Ակադեմիայի փոխնախագահ Ն.Մուրավյովի 1848թ Սանկտ- Պետերբուրգում հրատարակված ,,Վրաստան և Հայաստան,, ուղեգրության երկրորդ հատորում: Առայսօր էլ հարևան ճոճկանցիները և այլ հարակից գյուղերի տարեցները Ախթալայի փոխարեն ասում են Ըխտալի:Հետաքրքրական է, որ Ախթալա ձևի դեպքում ախթալացի ճիշտ տառադարձման փոխարեն առ այսօր ախթալացիները իրենք իրենց անվանում են ախթալեցի:

Երվանդ Լալայանը 1901 թ. Թիֆլիսում հրատարակված ,,Ազգագրական հանդես,, հատոր է-Ը, էջ 429-ում Բորչալուի գավառի մասին գրելիս հիշատակել է. ,,Ախտալի պղնձահանքում հին ժամանակից, 5-րդ դարից, կանգնած է եղել եկեղեցի,որի մոտ հետզհետե շինվել են մյուս եկեղեցիները, և ի վերջո Ս.Աստվածածին մայր եկեղեցին, հավանորեն Իվանեի ժամանակ և նրա ջանքերով, երբ Թամար թագուհու հաղթական թագավորության միջոցին ճարտարապետությունը սկսել էր ծաղկել,,:

Ախթալա բառի ժողովրդական երկու ստուգաբանություն կա. Համաձայն առաջինի՝ թուրքերեն այն նշանակում է սպիտակ բացատ՝ աղ+թալա: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի առաջին հատորում այն այսպես է ստուգաբանվում. իբր տեղի հանքաքարի համար: Ժողովրդակն երկրորդ բացատրությունը՝Ախթալայի փոխարեն ասում է Ախտալի՝ որպես ախտերով լի: Համաձայն այս ավանդության, տեղի մի վարդապետ անիծում է գյուղը և բնակիչներն աստիճանաբար մահանում են: Այս բացատրության մեզ հայտնի սկզբնաղբյուրը նույն Ձալալյանն է:

Այս քիչ հետազոտված անվան ստուգաբանության մեր կարծիքով ճիշտ բանալին պետք է փնտրել Ախթալան համեմատելով Ախթամարի հետ: Ախթամար կղզու անվան ստուգաբանության երկու տարբերակների աղթ արմատը մեր կարծիքով կիրառվել է Ախթալայի անվանափոխության համար. Մի դեպքում աղթամար է աղթ/աղոթք / +ա + մայր

Աղթամար: Աղոթամայր կամ էլ աղթ / ժայռ / + ա + մար /ծով /, որից հետևում է ,որ Ախթամար նշանակում է ծովաժայռ կամ ծովաքար:Այս տարբերակն էլ է կիրառելի Ախթալայի համար, քանի որ Ախթալան շրջապատված է հզոր ժայռային համակարգով: Մեր կարծիքով Ախթալայի անվանփոխման հիմքում դնելով աղթ –արմատը, այն կապելով աղոթքի հետ, որովհետև Ախթալայում կա 17 եկեղեցի ու մատուռ և լք արմատը կստանանք Աղթալի, այն է՝ այս վայրը լի է աղոթքով:

Ըստ մեզ վրացական, իսկ այնուհետև հայկական աղբյուրներում Աղթալին դարձրել են Ախթալա և այսօր կարելի է այդ գեղեցիկ և բարեհունչ անվանումն օգտագործելով, վերջ դնել թուրքական ստուգաբանության տարբերակին և լավ քայլ կատարել հայկական տեղանքագիտության մեջ,ստանալով Ախթալի անունը,ինչը խորթ չի լինի նաև Ախթալայի այսօրվա բնակիչների համար և անհրաժեշտություն չկա հետզհետե զբոսաշրջային կենտրոն դարձող Ախթալայի նոր,մեկ այլ անունը թե Հայաստանումև թե արտերկրում մեծ նյութական և այլ ջանքերի գնով առաջ մղելուն:

Մեր հարացախույզը ցույց է տվել, որ ախթալեցիների գերակշիռ մասը թուրքական նմանություն ունեցող Ախթալայի փոխարեն, միանգամայն կողմ են հայահունչ Ախթալիին,որի համաժողովրդական շրջանառության մեջ մտնելը թե ճիշտ կլինի,թե ավելի ու հեշտ,քան մեկ այլ անվանման դեպքում:

ԱԽԹԱԼԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ԽՆՁՐԻԿՅԱՆ